ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2016-6-1-Ա

ք. Երևան 29.06.2016թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2016 թվականի հունիսի 29-ի նիստում քննարկեց 2016 թվականի հունիսի 14-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ Ջփեն Թբեքոու Ինք. ընկերության (2-2-1, Toranomon, Minato-ku, Tokyo, Japan, JP) բողոքը «պատկերային» (IR1236929) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 2-րդ մասի «ա» ենթակետի, «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու եւ քննարկելու» ՀՀ կառավարության 2010թ նոյեմբերի 18-ի N 1538 -N որոշմամբ հաստատված կարգի 122-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ ենթակետերի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, եւ դրանով մակնշվող ապրանքների եւ (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված պատկերային ապրանքային նշանը չի կարող գրանցվել, քանի որ այն շփոթելու աստիճան նման է ավելի վաղ առաջնությամբ Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող "GARNI" ("GRAND TOBACCO" Joint-Venture Co. LTD 22, Shahamiryanneri str. 0061 YEREVAN (AM) 14697) համակցված ապրանքային նշանին գույնի եւ պատկերի առումով եւ ամբողջությամբ մտնում է գրանցված ապրանքային նշանի մեջ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ: «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն ներկայացված պատկերային ապրանքային նշանը շփոթելու

աստիճան նման է նույնական ապրանքների համար ավելի վաղ առաջնությամբ Հայաստանի Հանրապետությունում գրանցված հակադրված ապրանքային նշանի պատկերային մասի հետ: Հետևաբար փորձաքննության բաժնի կայացրած որոշումը իրավաչափ է եղել:

Բողոքարկողը ներկայացրեց իր տեսակետը, որ ներկայացված ապրանքային նշանը ենթակա է գրանցման:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ որոշումն իրավաչափ է և ներկայացված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ «պատկերային» (IR1236929) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ